

բարձր իւր ի յայտականութիւն սկսանի, զի մանկական տին ընդունակ է, և զբարս խոտանա առաւել ընդունի վասն պակասութեանն, և կարեաց՝ որ ի բնութիւնն իւր կայ. և որ զօրութիւն որ նախ երեւի ի մանուկն՝ յայն լանայ որ Հաստատես: Առաջին իրքն ի նշանաց զօրութիւնէն ընտրողութենէ որ ի սոյայն յայտնի՝ ամօթն է. նշան, յոր ժամ տիրէ ամօթն՝ նա գլխակոր կու կենայ սոյայն ժամանակ մի. և այս գուշակումն է հոգւոյն իւրոյ, որ զբարին ընտրէ և զլարն անտրգէ. և յորժամ այսպէս լինի՝ յաւելումն ի խրատ, որ այլ առաւել ի նոյն կենայ:

Ծուլութեան ամենեւին տեղի ոչ տայ: — Ամենայն իրք ի կրթութեան մասկանն այս է. որ ի յարակցութիւն նոցա որոց գործն ի յայտականութիւն կու հայի, զգոյշանալ, ի խաղ և յիւ և նիստ: Զի հոգի մասկանն տակաւին անգիծ է, և ընդունակ է կերպի՝ առաւել քան զհամահասական իւր. պարտ է զնա ի տեսակ մարգարէութեանցն⁽¹⁾ սգաստացուցանել, մանաւանդ ի քարամաթ⁽²⁾:

1. Խրատը, առածը, վարդապետութիւնը իմաստաւորաց:

2. Բարեբաւորութիւն, ազնուաբարութիւն:

որ ի խելս և ի յընտրողութիւնս և ի հաւատարմութիւնս և ի պարկեշտութիւնս՝ արժանաւոր են, և ոչ յայն որ ի գանձս կամ յազգըս վերաբերի:

Յետոյ զճանապարհօ և զշաւիղս հաւատոյ նմայ ուսուցանեն, և զնա ի պահպանութիւն նմին յօժարեցնեն: Եւ յորժամ ի հաւատոցն երես դարձնէ, յանդիմանն զնա՝ զբարին առաջեւ իւր գովել և զվատթարսն պարսաւել: Եւ եթէ գործ բարի ինչ ի նմանէ յայտնի՝ զայն գովել. և եթէ տակաւ ինչ անկարգութիւն յայտնէ, յանդիմանութեամբ և ըստ պառնալեօք ուղղել. և զանպարկեշտ ուսուել և ըմբել, և զհանդերձս փափուկս և զարգարունս, յայտ նմին արհամարհ ցուցանել. և բառնալ ամենեւին զհոգին ի մարմնաւոր փափկութեանց: Եւ ասել նմա, թէ բաղմութեանք հանդերձ և նկարէն գործած՝ կանանց է վայելուչ և ոչ արածց, զի մեծադարմն՝ ի հանդերձն ոչ հայի: Եւ յորժամ յայն վաբժի, և լսելիք նորա այնու լցուի՝ վասն կըրկնելոյ բազում անգամ բանիցն, յայնժամ նմա սովորութիւն դառնայ. և սովորութիւնն երկրորդ բնութիւն է, ըստ իմաստնոյն: Եւ նոքա որ հակառակին այսմ խրատու՝ ի նոցանէ պատրաստ պահել զսոյայնս:

ԻԾԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ

(Տես էջ 228)



ՈՏԻ զամբարած ժողովն Սրբոց Առաքելոց եկեղեցւոյն մէջ⁽¹⁾ բաշտեցաւ, ներկայութեամբ կայսեր և քահանայապետական նուիրակաց, որք այնպիսի անօրէն հնարիւք վաստակուեր էին: Ժողովոյն անդամք երեք հարիւր տասնութը եպիսկոպոսոնք էին: Իգնատիոս ա.

(1) Այս եկեղեցւոյս տեղը շինուած է Սուրբան Մենմարի մէջիքն:

սոնց զիմացն ելաւ իբր մեծ յանցաւոր մի: Եկեղեցւոյ ամենամեծ դպրեակցութիւններէն մէկն է այս, և յանցաւոր համարելոյն դատաստանը երկայն փաղրածութիւն մը եղաւ: Բարդոս գրեթէ սրոյ հարուածով մը սպաննեց Անիլիւրիոյ մետրապոլիտան, որ համարձակեր էր չհանիլ ցուցընել կայսեր նախածական կերպով վարուելուն ամբաստանելոյն հետ: Երթմանադռնակու սուտ վկայք հաստատուցին, թէ երբէք իգնատիոս օրինաւոր կերպով

ձեռնադրուած չէր: Նիկողայոս քահանայապետին նամակն կարդացուեցաւ, կորստեղով մէջէն՝ ինչ որ ավտոմատիկէց պատրիարքին նպատաւոր էր: Իգնատիոս մինչև ցլեթը մերժած ըլլալով իր հրաժարումը տալ, նախատախից եղանակաւ նորէն ավտոմատիկէց եղաւ, և նուիրակը իրենց ստորագրութիւնը գրին այդ ամօթալի վճռոյն տակ՝:

Բայց փոտ, այս վճիռն ալ ձեռքը ունենալով հանդերձ, զեռ կը վախէր քահանայապետին բարկութենէն, և ամեն միջոցաւ կ'ուզէր իգնատիոսի ուղղակի հրաժարումն ձեռք ձգել, նոյն իսկ արիասիրտ մարտիրոսին ստորագրութեամբն. ուստի կայսեր հետ սկսան նորէն տանել: Այս անգամ խեղճ բոլորովին մերկ կոստանդին կոպրոնիմոսի շիրմին մէջ փակեցին, որ գրեթէ վար մը առաջ մեռած էր: Իգնատիոս երկայն ժամանակէ ՚ի վեր կրած տանջանքէն սասանելի թանջը ունէր. տասնութինք օր այն փոսին մէջ զինքն թողցոյին, իրեք շաառականաց պահպանութեանը ներքեւ, որոնց անուանքն պատմութեան մէջ մնացած են: Հրաման ունէին ամեն կերպ տանջել իրենց բանտարկեալը, մինչև որ զիջանի: Մարգուս երեւակայութեան օտուկն կու գայ մտաբերելով այդ կատաղեաց հնարած իրարմէ սաստիկ չարարանքներն: Երբեմն ցուրտ քարի վրայ կը պառկեցնէին զնա անձրեւի և հովի տակ, կամ քարէ դամբանին վրայ կը նստեցնէին, որուն կափարիչը սրածայր էր, ոտուրներուն ալ խոշոր ծանրութիւն կը կապէին. ամբողջ գիշերներ այն պրկոցին վրայ կը մնար. ոչ ուտելիք կու տային և ոչ քննալու թող կու տային: Վերջապէս, երբ կիսամեռ վիճակի մէջ ինկաւ, իր դահիճներն բռնի խաչ մը նշանել տուին իրեն. հրաժարման մտերակի մը տակ, որով ինքզինք կը հրատարակէր անարժան, յափշտակիչ և մշտնջենապէս անպատիւ: Այս վերջին անվայել գործն ալ կատարելէն վերջը, իգնատիոս ավտոմատիկէց ազատ արձակուեցաւ, որ մէկէն ետեւ եղաւ արքայութիւն պահանջելու: Քանի մը քա-

ջատիրաւ բարեկամաց օգնութեամբ՝ յաշողեցաւ գաղաթի պատուիրակ մ'ուղարկելու ՚ի Հռովմ: Բայց փոտ տեսնելով որ ինչպիսի յամառ հակառակորդի հետ է գործն, հրաման տուաւ կայսերմէ որ նորէն ձերբակալէ, և շուտ մը Հոգեպատեան օրը սրբոց Առաքելոց եկեղեցոյն մէջ, ժողովողեան զմաց, ավտոմատիկէցութեան կարգն կատարէին վերջը, աշուրները պիտի փորէին և ձեռուրները պիտի կտրէին: Այս եղերական գործոյն կատարուելուն նախընթաց զիշերն, զինտորք լուսնայն իգնատիոսի բնակած տունն սլալաբեցին: Դիպուածով ծառայից օմանք տեսան և իգնատիոսի իմացցոյին, որ արթուն զրտնուեցաւ, ծպտելու, մուրացկանի զգեստով ծանր բեռան մը տակ ծած, անցաւ զինտորաց մէջէն, որք մթութեան մէջ չհանչցան զինքն, և գէպ ՚ի ծովեզերք ինքզինքը նետեց, անկեց ալ նաւակով մը Պրոպոնտոսի (Մարմարա) վայրի կղզեաց մէջ փախաւ, Կիզիկոնի՝ (Էրտէք ատաօի) թերակղզոյն մօտ: Հոն, կայսեր մը որդի, Կ. Պրոպոնտատիրաքը, որուն անհաւատալի արիւթիւնը ամեն մէկ թշուառութեանց մէջ կարծես ալ աւելի կ'աճէր, ողորմելի տառազրածի մը կեանքը կ'անցընէր, մէկ կղզիէն միւսն անցնելով, մաշտաց, այրից մէջ պառկելով, խառով և պտղով կ'ապրէր, քիչ մը ողորմութիւն ծածուկ կ'ընդունէր, և զիշեր ցորեկ կը փախչէր զինտորաց ձեռքէն, որք իրեն ետեւէն ինկեր էին:

Այս անլուր հալածանաց վրայ Բիւզանդիոնի մէջ սաստիկ տրտունջը սկսան: Երկրաշարժ, օր քանի մը շարաթ աւեց, ժողովուրդն իբր Աստուծոյ բարկութեան նշան համարեցաւ: Քաջալիրա խոտալանեղք սկսան հրապարակաւ քարոզել՝ որ Աստուած իգնատիոսի դահնաց զէմ հաներ է զտարեւս: Պատրիարքին հաւատարիմ մնացած եպիսկոպոսունք և խումբ մը վանականք՝ զրգռեցին ժողովրդեան բարկութիւնը, որ սաստիկ զայրացեր էին կայսեր և փոսի անգլութեանցը վրայ, և այնչափ ձայներնին բարձրացան որ

1. Աւտոմատիկէ քանդակ, զի պնդելի պարագայից մէջ զերթէ անկարելի էր ուղիւ կրող ձառուի:

(1). Սա կղզի մ'էր Աթոյ եզերալը մօտ, զոր Մեծի Աղեքսանդր ցամաքին հետ միացուց:

աբըւնիքն ալ վախնալ սկսաւ: Միքայէլ և փոռ խօսք տուին որ իգնատիոսն հան- գիստ կը թողուն՝ եթէ էջ. Պոլիս դառնալու ըլլայ: Այս անձն, որ վախն ինչ ըլլալը չէր գիտեր, շուտ մը էջ. Պոլիս դարձաւ, և գնաց Տէրէպոնիմ կղզեակին մէկ վանքը բնակեցաւ:

Տարիներ անցան: Նիկողայոս քահանա- յապետն, որ իր անհաւատարիմ գտնուող նուիրակները պատմեր էր, շատ աշխա- տեցաւ դարձեալ իգնատիոսը վերահաստա- տելու իւր աթոռն: Վրայէ վրայ շատ նա- մակներ ժողոմէ կայսեր: Արեւմտեան եպիսկո- պոսաց ժողովք մը բանադրեց զկայսրն և զփոռ, իրենց կողմնակիցներուն, և զիգնատիոս գաւ- ձեալ հաստատեց յիւր աթոռն: Բարդասի սպանութիւնն, որ իգնատիոսի ոխերիմ թըշ- նամին էր, 866ին ապրիլ ամսոյն մէջ, իրեն վշտաց մեղմացում մը չբերաւ: Փոռի ան- հաշտ աստելութեան և Միքայէլի բռնաու- րութեան առարկայ մըն էր: Այդ տմարդի կայսրն, որ ձեռքին արտաքին երեսի մէկ հարուածովն Կրետէի եպիսկոպոսին տկամները թափեց, վասն զի իր ցոփութիւնքը կը յան- դիմանէր, և իր թշնամեաց դիակներն գե- րեզմանէն հանել տալով՝ ծեծել և հրապա- րակաւ այրել կու տար: Արդէն փոռ զիմակն վար առեր էր, Հոռովմայու հետ յայանապէս հաղորդակցութիւնը կտրեց, և համարձակեցաւ Հոռովմայ վաղուց ՚ի վեր ունեցած սովորու- թիւնքը պախարակել. հանգանակին մէջ և յՈրդոյ յաւելումն տարակուսի տակ ձգեց, և Նիկողայոսի բանադրանաց դէմ, ինքն ալ գրահանայապետն հրապարակաւ բանադրեց- և հանդիսապէս աթոռնից հրատարակեց զնա: Արեւելեան մեծ հերձուածն, որ ար- դէն սկսած էր կայսերաց և քահանայապե- տաց մէջ հանդիպած անդադար վէճերովն, սաստիկ կերպով մը բռնկեցաւ: Բայց եղե- բական դէպ մը առժամանակեայ դադարումն տուաւ այդ հերձուածին: Միքայէլ 867ին սեպտեմբերի 23ին զԿերտուան ժամը երե- քին, սպանուեցաւ Սուրբ—Մամա եկեղեց- ւոյն արուարձանի մը (1) մէջ, վասիլ սենե-

կապետին հրամանաւն, զոր իրեն աթոռա- կից ընտրեր էր կայսրն տարի մը առաջ (2):

Այս նոր կայսրն, որ Մակեդոնացի կայ- սերաց անուանի ցեղին հիմնադիրն եղաւ, զիւր վատառնուն բարեբարն սպաննել ապէն վերջը, մինչև որ Միքայէլի ձեռքը պատ- ւոյ հասած մարդկին մէջ տեղէն չվերցուց, չկրցաւ հանգստութիւն գտնել: Աթոռը ելնե- լուն երկրորդ օրն, աթոռընկէց բրաւ զփոռ, և վանք մը փակեց. Եղիա ծովապետն զըր- կեց կայսերական ցոխնաւով, և բերել տը- ւաւ զիգնատիոս Տերերենիմ կղզեակէն ի Սըր- բազան Պալատն: Նոյն տարւոյն նոյեմբերի 28ին, Նիկողայոս քահանայապետին մա- հուանէն տասն օր վերջը, և գրեթէ ճիշտ իգնատիոսի առաջին աթոռընկէցութենէն տասը տարի անցեր էր, մեծ խոստովանողն դարձեալ հանդիսապէս իւր աթոռը հաստատե- ցաւ: Փոռ և իր կողմնակիցքն որ չզոյա- ցին, ութերորդ տիեզերական ժողովոյն մէջ (869), որ այս խնդրոյս համար գումարեցաւ, իրենց պաշտօնէն վաղորեալ վճռուեցան: Իգ- նատիոսի կատաղի հակառակորդին աթոռըն- կեցութեան դէպք մեծ հերձուածին երկարա- զոյն և ցաւալի դրուագներէն մին է, յորում Արեւելք Հոռովմայ դէմ ելաւ: Փոռ իր բան- դին մէջէն բոլոր կայսրութիւնը տակնուվրայ կ'ընէր՝ իր բազմաթիւ կուսակցաց ձեռքը: Երբք հարիւր եպիսկոպոսունք՝ աւելի իւր հանճարէն հրապուրուած, իւր կողմն անցան և Ութերորդ տիեզերական ժողովն գումարե- ցաւ՝ 869 հոկտեմբեր 5ին, Նիկողայոս Ա ի յաջորդին, Ալլիքանոս. Բ քահանայապետին նուիրակաց ներկայութեամբ: Ալլիքանոս իւր նախորդին պէս հաստատապէս միտքը դրած էր պաշտպանելու զիգնատիոս: Փոռ բռնի բերուեցաւ ժողովոյն զիմաց. իւր՝ պատառ- խանները, որ հազիւ համոզուեցաւ խօսելու, ամենուն ցատումն շարժեց: « Իմ արդարա- ցուցումն, ըսաւ հինգերորդ նստին մէջ, չէ յայսմ աշխարհէ, եթէ յայտնուած ըլլար՝ ուրիշ յոյս կ'ունենայիք »: Հարք ժողովոյն

(2 . Բարդասի մահուան գաւազդութիւնն Աստիլի ձեռքով եղած էր. և անոր սպանմանէն վերջը կոյ- սեր վերայ իր ազգեցութիւնն աւելցեր էր:

(1) . Էջ. Պոլսոյ Քիսիդիքիքոս դրան մօտ, որ հիմակ Այվան սէրայ (Այ Մամ սէրայ) գափուսի կ'ըսուի:

բանադրեցին զինքը և իր կողմնակիցներն , որք անզեղջ մնացին : փոսն ալ անէծք կարգաց իւր դատաւորացը : Ժողովն 870 փեարուարի 28ին վերջին գումարմամբն փակուեցաւ , վասիլ կայսեր , իւր Կոստանդին որդայն և Բորիս Բուլղարաց թագաւորին ներկայութեամբ : Այս վերջին նիստին մէջ՝ մերժեցին կայսր տիտղոսն տալու Մեծին Կարողոսի յաջորդ փրանկ թագաւորաց , ուրոնց գեապաններն ներկայ էին ժողովոյն : Ու թերսոյ տիեզերական՝ ժողովն քանոնութեամբ բարեկարգական կանոններ հաստատեց՝ որոնց մէկն՝ « կը հրամայէր եպիսկոպոսաց՝ իրենց աստիճանն յարգել , և անարգելի չընել զայն շողորորթաց դիմաց նուաստացնելով » :

Կը մնայ այժմ պատմել թէ ինչ վերջ ունեցան այս երկու անձինք , իգնատիտ և փոս , որոնց երկար վէճն այնչափ սաստիկ ցնցեց զկայսրութիւնն : Այնպիսի վախճան մը ունեցաւ , որ Բիւզանդիոյ պատմութեան անհաւատալի խռովութեանց անգէտ ընթերցողք՝ կրնան զարմանալ : Իգնատիտ մեռաւ , այնչափ քաշած չարարանքներէն հիւժեայ , 878 հոկա . 23ին , յետ Գափնեայ պալատին շրջապատին մէջ Միքայէլ հրեշտակապետին (1) եկեղեցին շինելու , անշուշտ 'ի յիշատակ իւր երկայն աքսորանացը Տէրէրէնթին կըղզեկին մէջ . երեք օրէն փոս անոր յաջորդեց : Իր զարմանալի ճկունութեամբն յաջողեցաւ վաստիկ վասիլ կայսր սիրտը : Կաշաւորով և ահով կառավարեց : Ալլահմոս Բէն յաջորդ՝ Յովհաննէս Ընն հետ հաշտուեցաւ և իր վրայէն նզովքը վերցրնել տուաւ , հաղորդակցութիւնը վերանորոգեց անոր հետ : Նոր ժողով մը գումարեց երեք հարիւր իննսուն երեք եւսպիսկապետ , որք բոլոր իրեն կողմնակիցք էին , անմեղ հրատարակուեցաւ իրեն վրայօք եղած ամեն ամբաստանութիւններէն , և վերջին նստին պատրիարքաց անուանքն տալուն :

(1) Միխայիլու Մանուս փաշայ , Կ . Պոլսոյ առ մանկն անմիջապէս ետքն մզկիթ ըրաւ , հիմայ Մանուս փաշա ճամխի կ'ըսուի , Օսմանիէ ճամխին եւսեւ : Հոն և Մանուս փաշայի գերեզմանը : Ուրիշ պատմիչք Սափիւրու վանքին Սուրբ Միքայէլ եկեղեցին է յիշածը կըսեն . Թերեւս երկուքն ալ իգնատիտ չեւսած ըլլայ :

Փոսին անունն Հոսովմայ քահանայապետէն առաջ կարգացուեցաւ : Յոյնք այս ժողովն կ'ընդունին , իբր ութերորդ տիեզերական , 869ին յորում փոս դատապարտեցաւ , անկանոն կը սեպեն : Լեւոն Զ Իմաստասէրն որ վասիլ Աի որդին և յաջորդն էր , 886ին իմանալով որ փոս իրեն թշնամի է , վերջական կերպով արիտէն վար առաւ , և վանք մը փակեց , ուր հինգ տարի ալ ապրեցաւ : Ինն քահանայապետք նզովք կարգացեր էին վրան , Լեւոն Դէն սկսեալ մինչե փորմոզա : Փոսի մահուամբ վերջացաւ անսանելի վիճակն՝ որ երեսուն տարի տեւեր էր :


Անդերովիթոսի կամ Տէրէպենթ կղզեալին ժայլոյն վրայ , սուրբ Իգնատիոսէն վերջը , ամենէն անուանի աքսորեալն է Կոստանդին , Ռոմանոս Լեկապէնի որդին , որ օգնել էր իր հօրը զահլիկեցութեանը : Պատմեցինք թէ ինչպէս 945ին յունուար 27ի , Ռոմանոսի երկու որդիքը երեսունէինն օր կայսրութիւն ընելէն վերջը , իրենք ալ ըսնի վար առնուեցան զահլէն , Կոստանդին Պորփիրոսէն կայսր հրամանով , որ իրենց հօրաքեռայրն էր , մագերինին կտրեցին , ըսնի կրօնաւորեցան և աքսորուեցան : Պրոտիի վանքին մէջ իրենց հօրը հետ ցաւալի տեսութենէն վերջը , երկու իշխանագունքն իրարմէ բաժնուեցան . Կոստանդին Անդերովիթոս տաւուեցաւ , և Բիւզանդական աշխարհն այն տարօրինակ տեսարանն ունեցաւ երկուց կայսերաց , որ մին զմիւսն կործանեց , և 'նոքա՝ հայր և որդի էին , իւրաքանչիւրն՝ կրօնաւորական զգեստուք , իշխանաց փոքրիկ արշակազաւորին մէկմէկ ժայռի վրայ նստած , անհանգստեց յաջօք կը դիտէին զԿ . Պոլիս , փափաքելի խռովութեանն նշան մը տեսնելու հոն , որով կարենային զարձակ զահլ գառնալ . և միանգամայն ծովուն վրայ սպասելով այն նաւակին , որ պիտի բերէր Թերեւս իրենց մերձակայ խցիկը՝ երեկուան յաղթականն , որ այն ալ զահլոկեց եղած ըլլայ , և կամ Թերեւս բերէր զահլն՝ որ իրենց աչքերը փորէր :

Կոստանդին քիչ կեցաւ Տէրէպենթ կղզին . թէպէտ իր հօրը անկմանը քիչ մասնակից եղեր էր , իր Ստեփանոս եղբորմէն աւելի

անհանդարտ եղաւ, և աւելի դժուարաւ իր գերութեանը համակերպեցաւ: Եղոտանդին Պորփիւռոժէնի հրամանաւ Տենեկոս տարուեցաւ, Տրոյիոյ ծովեզերքին դիմաց: Բայց կ'երենայ թէ հոն ալ իր բանտապանաց շատ նեղութիւն տուաւ, որ նոյն տարին Սամոթրակէ տարին զինքը թրակիոյ դիմաց: Այս կողմէս մէջն է որ Շամբուազոյ գտաւ մօտերս՝ ցուկածէ վիթխարի պատուանդանն Յաղթութեան արձանին, զոր ինքն իսկ տարած էր՝ Պարիս. և հիմա Լուրի թանգարանին կարիատեան արձանաց որահր դրուած է: Այս նոր բանտէն ալ Եղոտանդին ջանաց փախել: Ամեն մէկ փախստեան փորձերուն՝

պահտպանք ալ աւելի խտրութեամբ կը հրակէին վրան, և հաւանականաբար կը չարչարէին ալ. որով բոլորովին յուսահատած, յանդգնագոյն փախստեան մը մէջ՝ սուսերակիր Նիկեոտան սպաննեց, որ իր շանտապանաց զխաւորն էր. այն ժամանակ իսկոյն զինքը կտոր կտոր բրին: Գերութիւնը երկու տարի չէր տևած: Իր հորաքրեոյրն Եղոտանդին Պորփիւռոժէն՝ փառաւոր յուղարկաւորութիւն մը ընել տուաւ, ու իւր հօրը Ռոմանոս կայսեր շինել տուած վանքին մէջ թաղել տուաւ, ուր որ արդէն թաղուած էր նոյն Ռոմանոսի առաջին կիսն Հեղինէ:

Շարայարեյի



ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԻՏԱԼԻԱ

ՎԵՆԵՑԻԱ ԵՄԵՆ ՆԱԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

(Տես յէջ 375)

Նախկին նկարիչք. — Յովնանէս Բեյլիսի.— Կարպակիոս :

Պեղաբուստից ակադեմիային մէջ կայ հաւաքածոյ մը ամենէն աւելի հին նկարչաց: Մեծ պատկեր մը միայն քաժան մամբք, 1380ին նկարուած, բոլորովին անհարթ, կը ցուցնէ նկարչութեան սկզբնաւորութիւնը. նոր արուեստն այս տեղ, ինչպէս նաև այլուր, բիւզանդական աւանդութիւններէն առեր է իրեն ծագումը: Նա ուշ կ'երեւի, շատ աւելի ուշ քան կանխահաւ և ուշիմ Տոսկանիոյ մէջ: Յիբաւի, Ժի. դարու մէջ, կը հանդիպինք Սեմիտեկոյի մը, Գուարիէնտոյի մը, որք Պատուիոնի մէջ հիմնուած շխտտոյի դպրոցին. անշնան աշակերտքն են, բայց նախկին ազգային նկարչիները գտնելու համար հարկ է երթալ մինչև հետեւեալ դարու կէտերը: Այն ժամանակ Մուրանոյի մէջ կ'ապրէր արուեստաւորաց ընտանիք մը, վիւրերիւք: Արդէն ամենէն աւելի հնոյն՝ Անտոն նկարչին զործոց մէջ կը տեսնուին վեներական ճաշակի սկզբնաւորներ, ծերունեաց քանի մը խոշոր մօրուքներ և ճաղատ գլուխներ, թաթաւած գոյներով վարդագոյն և կանաչի զարնոզ գեղեցիկ ասուեղէնք, գիրակ փաթեկ հրեշտակներ, լեցուն այտերով Տիրամօր պատկերներ: Իրմէն վերջը, իւր եղբայրն Բարթոլոմէոս, անշուշտ Պատուիոնի դպրոցին մէջ սովորած, վայրկի մը նկարչութեան մէջ

րիչները գտնելու համար հարկ է երթալ մինչև հետեւեալ դարու կէտերը: Այն ժամանակ Մուրանոյի մէջ կ'ապրէր արուեստաւորաց ընտանիք մը, վիւրերիւք: Արդէն ամենէն աւելի հնոյն՝ Անտոն նկարչին զործոց մէջ կը տեսնուին վեներական ճաշակի սկզբնաւորներ, ծերունեաց քանի մը խոշոր մօրուքներ և ճաղատ գլուխներ, թաթաւած գոյներով վարդագոյն և կանաչի զարնոզ գեղեցիկ ասուեղէնք, գիրակ փաթեկ հրեշտակներ, լեցուն այտերով Տիրամօր պատկերներ: Իրմէն վերջը, իւր եղբայրն Բարթոլոմէոս, անշուշտ Պատուիոնի դպրոցին մէջ սովորած, վայրկի մը նկարչութեան մէջ